

Ք Ա Ռ Ե Ա Կ Ն Ե Ր

Ճըշմարտութիւն կայ ամէն բանի մէջ,

Ոչ մէկ բանի մէջ բայց չըկայ լըման:

Մերք կը ժըպտի ան աստղէ մը անշէջ,

Մերք մանրէներէն կը նայի մեզ ան:

Սուգուեցայ սըրտիս խորն՝ մարգրիտներ հանեցի.

Անձկագին ճիգով ու վարանով, մը մը արեւ զոյժ

Ու քաղցըր պատրանով ես շարան հիւսեցի

Որ հակադրս պըննեմ պըսակով:

Յախտեցուքիւն, ի՛նչ պիտի բնեմ ես քու ծոցիդ մէջ,

Անսէր, անքալիսիծ, աներգ, աներագ քունով մը անվերջ.

Ուր հոգին պիտի չընախրէ արծուի մ'պէս սաւառնաքել,

Ձը քովէ ա՛յ գայն բաղձանքը փառքի, կատարներ և տենչն:

Սիրտս ամայի է, կիսաւեր մատուռ,

Ձեռն շողար հոն ալ մոմերն ու նըրագ,

Խորտակուեր՝ ամէն պատուհան ու դուռ,

Բոյն է դըրեր հոն բուն քիւի մը տակ:

Թէ ծնունդն ըսկիզբն է, մահը կեանքին վերջ

Ի՞նչ է կըրակն այս մեր հոգիին մէջ,

Ի՞նչ են ձայները որ մեզ կը կանչեն,

Հեռու-հեռաւոր աստղերուն մէջէն:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ